ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 605

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*21 հոկտեմբեր 2011թ.*

## ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴԻԼԻՋԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԹԱՂԱՄԱՍԻ ՀՈՎՔԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 45 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ Դիլիջանի քաղխորհրդի գործկոմի 1990թ. սեպտմբերի 28-ի թիվ 13 որոշմամբ, անհատական բնակելի տան կառուցման նպատակով, Անդրանիկի թաղամասից /Հովքի փողոց թիվ 45 հասցեում/ հատկացվել է 600.0քմ հողամաս քաղ. Լեոն Նալբանդյանին: Առկա է նաև հողի առհավետ օգտագործման պայմանագիրը հաստատված 1991թ. մայիսի 22-ին պետ. նոտարական գրասենյակի Դիլիջանի նոտարի N 451 սեղանամատյանում: Համաձայն բստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի, գրանցված Դիլիջանի նոտարական գրասենյակի 20.10.2011թ. թիվ 1764 սեղանամատյանում, նշված հողամասի ժառանգ է հանդիսանում քաղ. Գագիկ Նալբանդյանը: Նշված հողամասը երբևէ ետ չի վերցվել քաղաքապետարանի տնօրինության տակ, մինչ օրս տիրապետվում է քաղ. Գագիկ Նալբանդյանի կողմից:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1991թ. մարտի 13-ի թիվ 209 որոշման պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացման շրջանակներում վերականգնել Դիլիջանի Անդրանիկի թաղամասի Հովքի փողոցի թիվ 45 հասցեի բնակելի տան 600.0քմ հողամասի /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/ հողհատկացման փաստաթղթային հիմքերը, քաղ. Գագիկ Նալբանդյանի սեփականության իրավունքով:
2. Պարտավորեցնել քաղ. Գագիկ Նալբանդյանին.

1) Նշված հողամասի սահմանները համապատասխանեցնել քաղաքապետարանի կողմից հաստատված հատակագծին:
2) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, վերոգրյալ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
3) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 606

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*21 նոյեմբեր 2011թ.*

## ՔԱՂ. ԱԼՎԱՐԴ ՄԱՐԿՈՍՅԱՆԻ, ԴԻԼԻՋԱՆԻ ՄՈԼԴՈՎԱԿԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 5/2 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարան է դիմել քաղ. Ալվարդ Մարկոսյանը՝ Մոլդովական փողոցի թիվ 5 հասցեի շենքին կից կառուցված բնակելի տան և վերջինիս սպասարկման հողամասի իրավական կարգավիճակի որոշման խնդրանքով:
Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ Դիլիջանի Մոլդովական փողոցի թիվ 5 հասցեին կից քաղ. Ալվարդ Մարկոսյանի կողմից կառուցվել է բնակելի տուն դեռևս 2000-ական թվականներին, որի շինարարության թույլտվության, ինչպես նաև զբաղեցրած հողամասի հատկացման փաստաթղթային հիմքերը պահպանված չեն: Նշված բնակելի տան տվյալները չեն հակասում քաղաքաշինական նորմերին, զբաղեցրած հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը փաստացի զբաղեցնում է 174.0քմ հողամաս, որի նկատմամբ քաղաքացին ձեռք է բերում սեփականության իրավունք Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի ուժով /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. նոյեմբերի 13-ի թիվ 1328-Ն որոշման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղ. Ալվարդ Մարկոսյանի կողմից, Մոլդովական փողոցի թիվ 5 հասցեին կից կառուցված բնակելի տանը և 174.0քմ հողամասին տրամադրել նոր հասցե՝ Մոլդովական փողոց թիվ 5/2:

2. Մոլդովական փողոցի թիվ 5/2 հասցեի բնակելի տունը և 174.0քմ հողամասը համարել քաղ. Ալվարդ Անուշավանի Մարկոսյանի/ծնված 12.10.1960թ./ սեփականությունը:

3. Պարտավորեցնել քաղ. Ալվարդ Մարկոսյանին.

1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 607

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*21 հոկտեմբեր 2011թ.*

## ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՃՇՏՎԱԾ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ Դիլիջան քաղաքի Մ.Գորկու փողոց թիվ 29/9 հասցեի 4000.0քմ /ծածկագիր՝ 124-013/, Մ.Գորկու փողոց թիվ 29/11 հասցեի 2820.0քմ /ծածկագիր՝ 124-015/, Մ.Գորկու փողոց թիվ 29/10 հասցեի 1150.0քմ /ծածկագիր՝ 124-014/, մ.Գորկու փողոց թիվ 29/13 հասցեի 1074.0քմ /ծածկագիր՝ 125-016/, Մ.Գորկու փողոց թիվ 35 հասցեի 916.0քմ /ծածկագիր՝ 125-002/, Մ.Գորկու փողոց թիվ 35/1 հասցեի 390.0քմ /ծածկագիր՝ 125-003/, Մ.Գորկու փողոց թիվ 29/2 հասցեի 2793.0քմ /ծածկագիր՝ 126-017/ հողամասերի գլխավոր հատակագծերը կազմվել են համայնքի կադաստրային քարտեզի հիման վրա, որտեղ առկա են եղել որոշ անճշտություններ: Հողամասերի սեփականատերերի պահանջով կատարվել է ընդհանուր տարածքի ճշգրիտ գեոդեզիական հանութագրում, որի համաձայն Դիլիջանի քաղաքապետարանի կողմից կազմվել են հողամասերի ճշտված գլխավոր հատակագծերը: Հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել քաղաքապետին հաստատել վերը թվարկված հողամասերի ճշտված գլխավոր հատակագծերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 32 հոդվածի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Դիլիջան քաղաքի Մ.Գորկու փողոց թիվ 29/9 հասցեի 4000.0քմ /ծածկագիր՝ 124-013/, Մ.Գորկու փողոց թիվ 29/11 հասցեի 2820.0քմ /ծածկագիր՝ 124-015/, Մ.Գորկու փողոց թիվ 29/10 հասցեի 1150.0քմ /ծածկագիր՝ 124-014/, մ.Գորկու փողոց թիվ 29/13 հասցեի 1074.0քմ /ծածկագիր՝

125-016/, Մ.Գորկու փողոց թիվ 35 հասցեի 916.0քմ /ծածկագիր՝ 125-002/, Մ.Գորկու փողոց թիվ 35/1 հասցեի 390.0քմ /ծածկագիր՝ 125-003/, Մ.Գորկու փողոց թիվ 29/2 հասցեի 2793.0քմ /ծածկագիր՝ 126-017/ հողամասերի ճշտված գլխավոր հատակագծերը:

2. Պարտավորեցնել սեփականատերերին.

Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն վերագրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 608

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*21 հոկտեմբեր 2011թ.*

## «ՔԵՄՓ ՎԵՆՉՈՒՐՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին է դիմել «Քեմփ Վենչուրս» փակ բաժնետիրական ընկերությունը՝ ի դեմս լիազորված անձ քաղ. Սուրեն Խաչատրյանի, ընկերության սեփականությունը հանդիսացող հողամասերի միավորման արդյունքում առաջացած հետևյալ հողամասերին նոր հասցեներ տրամադրելու խնդրանքով.

1. Գետափնյա փողոցի թիվ 7/5 հասցեի 4400.0քմ, Գետափնյա փողոցի թիվ 7/7 հասցեի 1950.0քմ, Գետափնյա փողոցի թիվ 7/9 հասցեի 826.0քմ և Գետափնյա փողոցի թիվ 7/10 հասցեի 700.0քմ հողամասերի միավորման արդյունքում առաջացած 7876.0քմ հողամասին,
2. Գարեգին Նժդեհի փողոց թիվ 4 հասցեի 948.0քմ, Գետափնյա աջ փողոց թիվ 11 հասցեի 775.0քմ, Գետափնյա աջ փողոց թիվ 9 հասցեի 896.0քմ և Գարեգին Նժդեհի փողոց 1-ին նրբ. թիվ 6 հասցեի 792.0քմ հողամասերի միավորման արդյունքում առաջացած 3411.0քմ հողամասին,
3. Գետափնյա փողոցի թիվ 3/1 հասցեի 400.0քմ, Գետափնյա փողոցի թիվ 7/1 հասցեի 5000.0քմ, Գետափնյա աջ փողոցի թիվ 23 հասցեի 38955.0քմ և Գետափնյա փողոց թիվ 7 հասցեի 32000.0քմ հողամասերի միավորման արդյունքում առաջացած 76355.0քմ հողամասին,
4. Գարեգին Նժդեհի փողոց 4-րդ նրբ. թիվ 19 հասցեի 4982.0քմ, Գարեգին նժդեհի փողոց 4-րդ նրբ. թիվ 15 հասցեի 1045.0քմ և Գարեգին Նժդեհի փողոցի 4-րդ նրբ. թիվ 17 հասցեի 990.0քմ հողամասերի միավորման արդյունքում առաջացած 7017.0քմ հողամասին,
5. Գետափնյա փողոցի թիվ 96/1 հասցեի 1610.0քմ և Գետափնյա փողոցի թիվ 96/3 հասցեի 6000.0քմ հողամասերի միավորման արդյունքում առաջացած 7610.0քմ հողամասին,
6. Գետափնյա փողոցի թիվ 96/2 հասցեի 690.0քմ և Գետափնյա փողոցի թիվ 96/4 հասցեի 1482.0քմ հողամասերից առաջացած 2172.0քմ հողամասին:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. «Քեմփ Վենչուրս» փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող Գետափնյա փողոցի թիվ 7/5 հասցեի 4400.0քմ, Գետափնյա փողոցի թիվ 7/7 հասցեի 1950.0քմ, Գետափնյա փողոցի թիվ 7/9 հասցեի 826.0քմ և Գետափնյա փողոցի թիվ 7/10 հասցեի 700.0քմ հողամասերի միավորման արդյունքում առաջացած 7876.0քմ հողամասին տրամադրել նոր հասցե՝ Գետափնյա փողոց թիվ 7/5:
2.«Քեմփ Վենչուրս» փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող Գարեգին Նժդեհի փողոց թիվ 4 հասցեի 948.0քմ, Գետափնյա աջ փողոց թիվ 11 հասցեի 775.0քմ, Գետափնյա աջ փողոց թիվ 9 հասցեի 896.0քմ և Գարեգին Նժդեհի փողոց 1-ին նրբ. թիվ 6 հասցեի 792.0քմ հողամասերի միավորման արդյունքում առաջացած 3411.0քմ հողամասին տրամադրել նոր հասցե՝ Գետափնյա աջ փողոց թիվ 9:
3. «Քեմփ Վենչուրս» փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող Գետափնյա փողոցի թիվ 3/1 հասցեի 400.0քմ, Գետափնյա փողոցի թիվ 7/1 հասցեի 5000.0քմ, Գետափնյա աջ փողոցի թիվ 23 հասցեի 38955.0քմ և Գետափնյա փողոց թիվ 7 հասցեի 32000.0քմ հողամասերի միավորման արդյունքում առաջացած 76355.0քմ հողամասին տրամադրել նոր հասցե՝ Գետափնյա փողոց թիվ 7:
4.«Քեմփ Վենչուրս» փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող Գարեգին Նժդեհի փողոց 4-րդ նրբ. թիվ 19 հասցեի 4982.0քմ, Գարեգին նժդեհի փողոց 4-րդ նրբ. թիվ 15 հասցեի 1045.0քմ և Գարեգին Նժդեհի փողոցի 4-րդ նրբ. թիվ 17 հասցեի 990.0քմ հողամասերի միավորման արդյունքում առաջացած 7017.0քմ հողամասին տրամադրել նոր հասցե՝ Գարեգին Նժդեհի փողոց 4-րդ նրբ. թիվ 15:
5.«Քեմփ Վենչուրս» փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող Գետափնյա փողոցի թիվ 96/1 հասցեի 1610.0քմ և Գետափնյա փողոցի թիվ 96/3 հասցեի 6000.0քմ հողամասերի միավորման արդյունքում առաջացած 7610.0քմ հողամասին տրամադրել նոր հասցե՝ Գետափնյա փողոց թիվ 96/1:
6. «Քեմփ Վենչուրս» փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող Գետափնյա փողոցի թիվ 96/2 հասցեի 690.0քմ և Գետափնյա փողոցի թիվ 96/4 հասցեի 1482.0քմ հողամասերից առաջացած 2172.0քմ հողամասին տրամադրել նոր հասցե՝ Գետափնյա փողոց թիվ 96/2:
7. Առաջարկել «Քեմփ Վենչուրս» փակ բաժնետիրական ընկերությանը հետևյալ պայմանը.
«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 609

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*21 հոկտեմբեր 2011թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ՎԱՍԻԼԵՎ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 78 ՀԱՍՑԵԻ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ Դիլիջանի Վասիլև փողոցի թիվ 78 հասցեի տնատիրությունը սեփականության իրավունքով պատկանում է քաղ. Պետրոս Ստեփանի Ափանոսյանին: Վերջինս դիմել է քաղաքապետարան՝ նշված հասցեի տնամերձ հողամասի հողհատկացման փաստաթղթային հիմքերը վերականգնելու խնդրանքով:
Հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ Վասիլև փողոցի թիվ 78 հասցեի հողամասը բաղկացած է երկու զույքային միավորներից՝ որոնց փաստացի չափը կազմում է 2462.0քմ /1006.0քմ և 1456.0քմ/, որից 1025.0քմ-ի /748.0քմ և 277.0քմ/ նկատմամբ քաղ. Պետրոս Ափանոսյանն ունի սեփականության իրավունք, իսկ 1437.0քմ /258.0քմ և 1179.0քմ/ հողամասը քաղաքացու կողմից փաստացի ավել օգտագործվող հողամաս է: Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի ուժով քաղ. Պետրոս Ափանոսյանը փաստացի ավել օգտագործվող հողամասից 300.0քմ հողամասի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունքը: Մնացած 1137.0քմ-ը /258.0քմ և 879.0քմ/ օտարվում է քաղ. Պետրոս Ափանոսյանին կադաստրային արժեքով, այն է՝ 1412154 դրամ /320436դրամ և 1091718դրամ/:
Նշված 1437.0քմ փաստացի ավել օգտագործվող հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային

օրենսգրքի 64 հոդվածի 16 կետի և Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի Վասիլև փողոցի թիվ 78 հասցեի 1025.0քմ օրինական հողամասին կից ավել օգտագործվող 300.0քմ հողամասը, Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի ուժով, համարել քաղ. Պետրոս Ստեփանի Ափանոյանի /ծնված՝ 01.10.1955թ./ սեփականությունը:
2. Փաստացի ավել օգտագործվող 1137.0քմ հողամասը՝ 258.0քմ և 879.0քմ մակերեսներով, օտարել քաղ. Պետրոս Ափանոյանին ուղղակի վաճառքի ձևով: Օտարվող հողամասերի արժեքը կազմում է 320436 դրամ և 1091718 դրամ:
3. Կնքել հողի առքուվաճառքի պայմանագրերը, որոնք ենթակա են նոտարական վավերացման, իսկ պայմանագրերից բխող իրավունքները՝ պետական գրանցման:
4. Պարտավորեցնել քաղ. Պետրոս Ափանոյանին.
1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն վերագրանցելու նպատակով:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 610

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*21 հոկտեմբեր 2011թ.*

### ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ, ԴԻԼԻՋԱՆԻ ՄՈԼԴՈՎԱԿԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 5 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ԹԻՎ 11 ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՓԱԿ ՊԱՏՇԳԱՄԲԻ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին է դիմել Մոլդովական փողոցի թիվ 5 բազմաբնակարան շենքի թիվ 11 բնակարանի բնակիչ Ալվարդ Մարկոսյանը՝ նույն բնակարանը սահմանված կարգով սեփականաշնորհելու խնդրանքով:

Նշված բնակարանը քաղաքացուն օգտագործման է տրամադրվել Դիլիջանի քաղաքապետի 1994թ. հունիսի 30-ի թիվ 7/28 որոշման համաձայն: Առկա է նաև օրդերի արմատը՝ թիվ 5035, տրված 2003թ. սեպտեմբերի 22-ին: Սեփականաշնորհման նպատակով բնակարանի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցվել է /սեփ. վկայական՝ թիվ 2813725, տրված 24.05.2011թ./: Բազմաբնակարան շենքի ծավալից դուրս, նշված բնակարանին կից, քաղ. Ալվարդ Մարկոսյանի կողմից ինքնակամ կառուցվել է փակ պատշգամբ:

Օրինականացման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Դիլիջանի քաղաքապետարան է ներկայացվել Սեյսմիկ պաշտպանության հյուսիսային ծառայության մասնագիտական եզրակացությունը նշված ինքնակամ կառույցի տեխնիկական վիճակի վերաբերյալ, որտեղ նշված է, որ ինքնակամ կառույցի /փակ պատշգամբի/ կոնստրուկցիաները իրականացված են սեյսմակայուն շինարարության գործող ՀՀՇՆ II-6.02.2006 նորմերի պահպանմամբ, ապահովված է պատշգամբի կրողունակությունը և տարածական կոշտությունը և այլն: Քաղաքապետարան է ներկայացվել նաև բազմաբնակարան շենքի բնակիչների /սեփականատերերի/ համաձայնությունը կառույցի օրինականացման վերաբերյալ:

Հանձնաժողովը նշում է, որ նշված ինքնակամ շինությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով սահմանված օրինականացման պայմաններին, չի խախտում այլ անձանց իրավունքները և

օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված է առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների: Հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին, վերոգրյալ ինքնակամ շինության օրինականացման վերաբերյալ: Ինքնակամ կառուցված 13.7քմ արտաքին չափերով փակ պատշգամբի օրինականացման համար օրենքով նախատեսված վճարի չափը կազմում է 5343 դրամ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման III հոդվածի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի Մոլդովական փողոցի թիվ 5 հասցեի բազմաբնակարան շենքի թիվ 11 բնակարանին կից ինքնակամ կառուցված 13.7քմ արտաքին չափերով փակ պատշգամբը ճանաչել օրինական:

2. Պարտավորեցնել քաղ. Ս[illegible]լարդ Մարկոյանին.

1) սույն որոշումը կայացնելու պահից 60 օրյա ժամկետում /չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած/ քաղաքապետարանի 900405051690 հաշվարկային հաշվին մուծել վերոգրյալ բնակարանի ինքնակամ կցակառույցի օրինականացման դիմաց գանձվող օրենքով սահմանված գումարը, այն է՝ 5343 դրամ, վերջինիս վճարման անդորրագիրը սույն որոշման անբաժանելի մասն է:

2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2010թ. հոկտեմբերի 15-ի թիվ 200-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումներ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 611

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25*85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*21 հոկտեմբեր 2011թ.*

### ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2010Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի " ԴԻԼԻՋԱՆԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 302 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ" ԹԻՎ 997 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի լրումն Դիլիջանի համայնքի ղեկավարի 2010թ. նոյեմբերի 29-ի «Դիլիջանի Կալինինի փողոցի թիվ 302 հասցեի բնակելի տան սպասարկման հողամասի փաստաթղթային հիմքերը վերականգնելու մասին» թիվ 997 որոշման և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70 հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2010թ. նոյեմբերի 29-ի «Դիլիջանի Կալինինի փողոցի թիվ 302 հասցեի բնակելի տան սպասարկման հողամասի փաստաթղթային հիմքերը վերականգնելու մասին» թիվ 997 որոշման մեջ լրացնել.

«Կալինինի 302 հասցեի բնակելի տան տնամերձ հողամասում սեփականատիրոջ կողմից կատարված բնակելի տան ինքնակամ կցակառուցումները իրականացվել են մինչև 2001թ. մայիս ամիսը, առանց քաղաքաշինական նորմերի էական խախտումների: Նշված ինքնակամ կցակառուցումները համարել օրինական Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն» :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 612

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*21 հոկտեմբեր 2011թ.*

## ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿՈՒ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 7/8 ՀԱՍՑԵԻ 137.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԱՍՏԱՏՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան համայնքի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ Դիլիջանի Մաքսիմ Գորկու փողոցի թիվ 7/8 հասցեի, 131-002 ծածկագրով, 137.0քմ մակերեսով հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը /սեփականության վկայական՝ թիվ 2851199, տրված 13.10.2011թ./, որը Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հողամաս է, մասնավորապես՝ ընդհանուր օգտագործման:
Հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել քաղաքապետին, նշված հողամասը, հասարակական սպասարկման օբյեկտի կառուցման նպատակով, ներկայացնել կառուցապատման իրավունքի մրցույթի՝ 40 տարի ժամկետով, 13700 դրամ տարեկան վճարի մեկնարկային գնով:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 73 հոդվածի պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի 13-րդ կետի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Դիլիջանի Մաքսիմ Գորկու փողոցի թիվ 7/8 հասցեի հողամասը հետևյալ մրցութային լոտով և պայմաններով կառուցապատման իրավունքի մրցույթի ներկայացնելու, ինչպես նաև հողամասի տարեկան վճարի մեկնարկային գինը հաստատելու մասին հարցը ներկայացնել Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու քննարկմանը.

1. Լոտ 4 /ՔԿ-11/ - Մաքսիմ Գորկու փողոց թիվ 7/8, 137.0քմ, ծածկագիրը՝ 131-002, ըստ նպատակային նշանակության՝ «Բնակավայրերի հող», հատկացման նպատակը՝ հասարակական սպասարկման օբյեկտի կառուցման, հողամասի տրամադրման ժամկետը՝ 40 տարի, հողամասի տարեկան վճարի մեկնարկային գինը՝ 13700 դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 613

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*21 հոկտեմբեր 2011թ.*

## ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ» 2132.0ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 2 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԻ ԵՎ 1676.0ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 2 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԿՐԿՆԱՃՈՒՐԴԻ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 2132.0քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը աճուրդի և 1676.0քմ մակերեսով թվով 2 հողամասերը կրկնաճուրդի ներկայացնելու վերաբերյալ՝ հետևյալ աճուրդային լոտերով, մակերեսներով, պայմաններով և մեկնարկային գներով.

1. Լոտ 41/ՔՀ-11/ - Օրջոնիկիձե փողոց IV նրբ. թիվ 92, 1500.0քմ, ծածկագիրը՝ 295-008, ըստ նպատակային նշանակության՝ «Բնակավայրերի հող», հատկացման նպատակը՝ անհատական բնակելի տան կառուցման, հողամասի մեկնարկային գինը՝ 3750000 դրամ,
2. Լոտ 42/ՔՀ-11/ - Սարալանջի փողոց թիվ 34, 632.0քմ, ծածկագիրը՝ 053-293, ըստ նպատակային նշանակության՝ «Բնակավայրերի հող», հատկացման նպատակը՝ անհատական բնակելի տան կառուցման, հողամասի մեկնարկային գինը՝ 1580000 դրամ,
3. Լոտ 9/ՔՀ-10/ կրկնաճուրդ - Սարալանջի փողոց թիվ 30, 801.0քմ, ծածկագիրը՝ 053-206, ըստ նպատակային նշանակության՝ «Բնակավայրերի հող», հատկացման նպատակը՝ անհատական բնակելի տան կառուցման, հողամասի մեկնարկային գինը՝ 2002500 դրամ,
4. Լոտ 10/ՔՀ-10/ կրկնաճուրդ - Սարալանջի փողոց թիվ 32, 875.0քմ, ծածկագիրը՝ 053-207, ըստ նպատակային նշանակության՝ «Բնակավայրերի հող», հատկացման նպատակը՝ անհատական բնակելի տան կառուցման, հողամասի մեկնարկային գինը՝ 2187500 դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 32 հոդվածի 13-րդ կետի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Դիլիջանի Օրջոնիկիձե փողոց IV նրբ. թիվ 92, Սարալանջի փողոց թիվ 34, Սարալանջի փողոց թիվ 30 և Սարալանջի փողոց թիվ 32 հասցեների հողամասերը աճուրդի /կրկնաճուրդի/ ներկայացնելու և դրանց մեկնարկային գները հաստատելու մասին հարցը ներկայացնել Դիլիջանի համայնքի ավագանու  քննարկմանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ